ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Լեռնահայաստանի հերոսամարտը, Գայլախմբերի մարտավարությունը

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԻՇԽԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿԱՊԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3

2. Գարեգին Նժդեհ: Կենսագրական ակնարկ /1918-21թթ.----------5

3. Լեռնահայաստանի հերոսամարտը, «Գայլախմբերի» մարտավարությունը ----------8

4. Խուստուփյան կանչեր. Հրամաններ ----------12.

5. Կոչեր ----------15

6. Նժդեհի՝ մարտի վարման տեսությունը և արդիականությունը----------18

8. Եզրակացություն---------- 21

7.Դասի պլան----------22

Օգտագործված գրականության ցանկ----------15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության, մամուլի նյութերի և արխիվային որոշ փաստաթղթերի որոշակի ընդգրկմամբ ցույց է տրված Զանգեզուրի հայության հերոսական գոյամարտը, որ նա հանուն իր ազատության 1920-1921 թթ. մղել է ռուսական 11-րդ կարմիր բանակի և Խորհրդային Ադրբեջանի զորամասերի դեմ, դրանով իսկ ձախողելով գավառն Ադրբեջանին ենթարկելու բոլոր փորձերը: Զանգեզուրը Խորհրդային Հայաստանի անբաժան մաս կազմեց լեռնավայրի հայության աներևակայելի տոկունության և անձնազոհ պայքարի շնորհիվ: Աշխատության մեջ ի ցույց է դրված Գարեգին Նժդեհի իբրև զորավարի, քաղաքական և պետական գործչի, վճռական դերը նշված ժամանակաշրջանում հայկական գավառում ծավալված գոյամարտի տարիներին: Հատկապես Արցախն ու Սյունիքը 2020 թ. նոյեմբերի 9-ից ու դեկտեմբերի 18-ից հետո հայտնվել են ռազմաքաղաքական այնպիսի իրավիճակում, որ նժդեհյան գաղափարների ոգեկոչումը (ամենատարբեր եղանակներով) պահի գլխավոր հրամայականներից է: Չմոռանանք՝ այդ գաղափարախոսությունը շարունակում է մնալ իբրև զգոնության կոչ, իբրև լինելիության բանաձև, իբրև պատմության դասերը սերտելու պատգամ: Այնուհետև՝ Գարեգին Նժդեհի՝ Սյունիքի և Արցախի պատմական բացառիկ դերի ընկալումը, որի արտահայտությունը Սյունիքի հաղթական դյուցազնամարտն էր 20-րդ դարասկզբին: Թեև Նժդեհի որոշ դատողություններ, մոտեցումներ, իր կողմից մշակված ռազմարվեստի պատմության օրենսդրական փաստաթղեր, կիրառված մարտավարական հնարքներ պատշաճում են իր ժամանակի հասարակական, քաղաքական և ռազմագիտական մթնոլորտին, ադուհանդերձ, նրանք ունեն արդիական ու դաստիարակիչ նշանակություն:

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է գաղափարական, ռազմական, բարոյական դաստիարակությունը նոր, բազմազան ուղիների ու միջոցների մշակման անհրաժեշտությամբ, որը պետք է իրականացվի Նժդեհյան ռազմավարության ուսումնասիրման գործընթացում ապագա հայ մարտիկի ինքնության ընկալման ու ձևավորման միջոցով՝ վերակենդանացնելով Գարեգին Նժդեհի ոգին՝ փորձությունների մեջ հայտնված Սյունիքում տեսնելու նոր Նժդեհներ:

Հետազոտության նպատակն է նպատակն է մեկ անգամ ևս արժևորել ու հանրայնացնել 1918-21 թթ. զանգեզուրյան իրադարձությունները: Խնդիր ունենք հանգամանորեն լուսաբանել հերոսական իրադարձությունների կարևորագույն դրվագները,

մասնավորապես Գարեգին Նժդեհի գործունեությունը Սյունիքի ինքնապաշտպանության կազմակերպման գործում:

Նշված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել Լեռնահայաստանի հերոսամարտը ժամանակագրական հարացույցում
- ուսումնասիրել հերոսամարտում կիրառված մարտավարական հնարքները
- ուսումնասիրել Նժդեհին՝ որպես պատմական հրատապ, ցպահանջ հայտնություն, որի հոգեխառնվածքին շունչ է տվել դարաշրջանը:

Աշխատանքի հետազոտական մասն իրականացվել է խնդրի շուրջ եղած գրականության, մամուլի, դասագրքերի և այլ նյութերի ուսումնասիրման ու վերլուծության մեթոդներով, որոնք իրենց արտահայտումն են գտել ստորև ներկայացվելիք բաշխիչ նյութերում՝ որպես սովորողների համար ինքնուրույն ուսումնասիրության նյութ:

Գարեգին Նժդեհ
Կենսագրական ակնարկ /1918-21թթ./

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, 1918թ. վերջին, Նժդեհը ՀՀ կառավարության կողմից նշանակվում է Նախիջեւանի գավառապետ, իսկ 1919թ. օգոստոսից՝ Կապանի, Արեւիքի եւ Գողթանի (Կապարգողթ) ընդհանուր հրամանատար: Այստեղ հարկ ենք համարում, թեեւ ընդհանուր գծերով, բայց մի փոքր հանգամանալից, անդրադառնալ այն հերոսականին, որ վարեց Նժդեհը 1919-1921 թթ., Զանգեզուրի լեռներում, որը նրա կյանքի եւ հայոց նորագույն պատմության ամենափառավոր էջերից է: Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու զորությանը՝ Սյունիքի հայությունը, Նժդեհի ղեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազնամարտը: Լեռնահայության դիմումներին՝ որեւէ կերպ օգնելու, ՀՀ կառավարությունը, բացի մեկումեջ արվող քաջալերանքի կամ համակրանքի խոսքերից, ոչ մի կերպ չարձագանքեց: Իսկ Նժդեհը երբեմն ստիպվա ծ էր լինում չհնազանդվել վերին իշխանության հրամաններին: Մասնավորապես, երբ Խատիսյանի կառավարության կողմից նրան հրամայված էր գաղթեցնել պաշարված Գողթանի հայությունը, Նժդեհը մերժեց այն **եւ**, փոխարենը, սրբեց ու տեղահանեց գավառի թուրքական բնակավայրերը: Ավելին, 1920 թվականի օգոստոսին ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, համաձայն բոլշեւիկների հետ կնքված զինադադարի (իմա՛ 1920թ. օգոստոս ի 10-ին Թիֆլիսում Բորիս Լեգրանի ու Արշակ Ջամալ. յանի միջեւ կնքված համաձայնագիրը, որով ՀՀ-ն համաձայնություն էր տալիս Կարմիր բանակի մուտքին Զանգեզուր, Ղարաբաղ եւ Նախիջեւան), Դրոյի միջոցով հեռագրում էր Նժդեհին՝ թողնել Կապանն ու Գենվազը եւ անցնել Երեւան: Բայց Նժդեհը, չընդունելով ՀՀ զինվորական նախարարի՝ Զանգեզուրը թողնելու հրամանը եւ մերժելով Դրոյի առաջարկը՝ անցնել Երեւան ապաքինվելու, նախընտրեց մնալ Սյունիքում եւ մենակ չթողնել լեռնահայությանը: Այդ ծանր օրերին էր, որ Նժդեհը հղացավ եւ գործի դրեց Դավիթբեկյան Ուխտերը: 1920թ. օգոստոսի 25-ին, Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Նժդեհի զինվորներն ուխտեցին Դավիթ-Բեկի անունով՝ «հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռվել մինչեւ վերջին շունչը»: Այսպես ծնունդ առան Դավիթբեկյան Ուխտերը, որոնց նշանաբանն էր. **«Հանուն հայրենիքի՝ Դավիթ Բեկաբար»:** Բացահայտած թուրք-բոլշեւիկյան միացյալ դավադրությունն ու չընդունելով ՀՀ կառավարության կրավորական կեցվածքը, որը Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի հետ կնքած վերոհիշյալ համաձայնագրով, փաստորեն,

Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու նախաքայլ էր անում, Սյունիքը շարունակեց կռիվը եւ Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1920թ. դեկտեմբերին, իրեն հռչակեց ինքնավար: 1921թ. հունվարին Դրոն Բաքվից մի հեռագիր հղեց Նժդեհին, առաջարկելով նրան՝ թույլ տալ Զանգեզուրի խորհրդայնացումը, հավատացնելով եւ վստահեցնելով, որ այդպիսով Մոսկվայի առաջիկա կոնֆերանսում, ուր լուծվելու էին նաեւ վիճելի հողային հարցեր, Խորհրդային Ռուսաստանը բարյացակամ կլինի դեպի Հայաստանը եւ կպաշտպանի հայ աշխատավորության շահերը: Այս անգամ եւս Նժդեհը, իբրեւ հեռատես քաղաքագետ, չհեռացավ Սյունիքից եւ շարունակեց մաքառել: 1921թ., Գորիսում լույս տեսավ Նժդեհի **«Խուստուպյան կանչեր»** փոքրածավալ գրքույկը, որը պարունակում է կոչեր՝ լեռնահայությանը եւ պատվիրաններ՝ իր զինվորներին: Իր զինվորական հմտությամբ, կազմակերպչական տաղանդով եւ ոգեշունչ խոսքով Նժդեհին հաջողվեց ստեղծել «ժողովրդական կուռ բանակ մը, որ պատրաստ էր իր հրամանատարի ձեռքի մեկ շարժումին անսալով՝ կրակի մեջն անգամ նետվելու»: Նժդեհն էր, որ պարտության դառնությունը ճաշակել տվեց Դենիկինի, Կոլչակի ու Վրանգելի բանակները ջարդած եւ «անպարտելի» հռչակված 11-րդ Կարմիր բանակի հեծելազորի պետ Կուրոչկինին: Նույնիսկ Փետրվարյան ապստամբության պարտությունը եւ դրա հետեւանքով՝ 12 հազար գաղթականության (որից 4 հազարը՝ զորք) նահանջը,- որոնք զգալիորեն ազդեցին լեռնահայության բարոյահոգեբանական վիճակի վրա,- չընկճեցին Սյունիքը, եւ նա շարունակեց իր հաղթական կռիվները: 1921թ. ապրիլին հռչակվեց Լեռնահայաստանի Հանրապետություն՝ սպարապետ Նժդեհի վարչապետությամբ: Հունիսի 1-ին, Զանգեզուր անցած ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Լեռնահայաստանը հայտարարվեց Հայաստան՝ Սիմոն Վրացյանին նշանակելով վարչապետ (Նժդեհը մնում էր իբրեւ սպարապետ): Նոր կառավարությունը թույլ տվեց մի շարք կոպիտ սխալներ, որոնց մեջ ամենից ճակատագրականը եղավ երեք հազար թաթար-թուրքերի՝ իբրեւ քոչվոր, իսկ իրականում՝ որպես ծպտյալ դավադիրներ, Սիսիան ազա տ մուտքի արտոնումը: Իսկ Երեւանից նահանջած զորքը կամավոր անձնատուր եղավ կարմիրներին: Այս պայմաններում, մի կողմից՝ Վրաստանի ու Հայաստանի բոլշեւիկացումը, Արարատյան գաղթականության՝ դեպի Սյունիք նահանջը (մասնավորապես, նահանջող մտավորականության եւ երիտասարդության վաղաժամ անցնելը Պարսկաստան), որոնք բարոյալքիչ ու հոռի ազդեցություն ունեցան լեռնաշխարհի հայության վրա, մյուս կողմից՝ պարենի ու հացահատիկի չգոյությունը, վարչական եւ զինվորական մարմինների միջեւ

առաջ եկած անհամաձայնությունները, միաժամանակ՝ խուսափելու համար ավելորդ հալածանքներից, որին կարող էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի հայությունը եւ հաշվի առնելով, որ Հայաստանի բոլշեւիկյան ղեկավարությունն իր 1921թ. հունիսի հռչակագրով Սյունիքը հայտարարում էր կցված Մայր երկրին, Լեռնահայաստանը հուլիսին տեղի տվեց խորհրդայնացման առաջ: Թողնելով Զանգեզուրը՝ Նժդեհը հրաժեշտից առաջ հավաստեց լեռնահայությանը, որ ինքն ընդմիշտ չի' հեռանում եւ պիտի վերադառնա, եթե Երեւանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի տերը: Իսկ Խորհրդային Հայաստանի Հեղկոմին ուղղած իր դիմումը հաղթական սպարապետն ավարտում էր սաստող տողերով. «Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու, աշխատեք բավարարել հայ գյուղացիության եւ նրա մտավորականության արդար պահանջը»

Երկու տարվա կռիվների ընթացքում, թշնամու 15 հազար սպանվածի դիմաց Սյունիքը տվեց ընդամենը մի քանի տասնյակ զոհ, իսկ մոտ 200 գյուղեր մաքրագործվեցին թուրքերից ու վերադարձվեցին հայերին: Շնորհիվ Լեռնահայաստանի հերոսամարտի՝ հնարավոր եղավ՝

ա) փրկել լեռնահայությանը կոտորածից,

բ) Սյունիքը կցել Մայր հայրենիքին՝ մահացու անդամահատումից զերծ պահելով Հայաստանը,

գ) հոգեբանորեն ու ռազմագիտորեն հնարավոր դարձնել Փետրվարյան ապստամբությունը

դ) ապահովել հայ մտավորականության եւ մարտական ուժերի նահանջն ու անցումը Պարսկաստան:

Եվ այս ամենը, հիմնականում, շնորհիվ Նժդեհի անհատականության: Այսպիսով, 1921թ. հուլիսին Նժդեհը թողնում է Զանգեզուրը եւ անցնում Թավրիզ:

Լեռնահայաստանի հերոսամարտը, «Գայլախմբերի» մարտավարությունը



Զանգեզուրի հերոսամարտը 1920–1921 թթ.

Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող

Գարեգին Նժդեհ

Լեռնահայաստանի զինանշանը

1918—1921 թվականներին Զանգեզուրում մղված գոյամարտը, որը կոչվում է նաև Լեռնահայաստանի հերոսամարտ, հայոց պատմության փառապանծ էջերից մեկն է: Հերոսամարտի հիմքում դրված էր սկզբունքային մի հարց՝ արդյոք այդ հայկական տարածաշրջանը մնալո՞ւ էր հայրենի սահմանների ներսում, որտեղ վեր են խոյանում հազարամյա հայկական պատմամշակութային հուշարձանները, ազատագրական պայքարի արյունով ներկված հայոց նախնիների գերեզմանները, թե դա պետք է զավթեին թուրք-թաթարական հրոսակները: Եթե ուշադիր զննենք հիշյալ տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը, կտեսնենք, որ այս պարանոցն իրենից ներկայացնում էր պանթուրքիստական ծրագրի իրականացման հիմնական խոչընդոտող գործոններից մեկը: Ուստի թուրքերը և նրանց կամակատար բուրք-թաթարներն ամեն գնով ձգտում էին տիրանալ այդ տարածաշրջանին, ճանապարհ բացել պանթուրքիստական գաղավարի իրականացման համար: Իսկ այդ ծրագրի իրականացումը մահաբեր հետևանքներ կունենար մեր ազգի և հայրենիքի մնացած մասի համար: Մինչև 1918 թվականը Սյունիքում ինքնապաշտպանական մարտերը կազմակերպվում էին հիմնականում տեղի աշխարհազորի կողմից:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տեղի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար Սյունիք գործուղվեց գնդապետ Արսեն Շահմազյանը, որը, լինելով հմուտ և բանիմաց զինվորական, կարճ ժամանակում հայտարարեց 20—22 տարեկան երիտասարդների զորահավաք, տեղերում կազմավորեց կայուն զորաջոկատներ: Ստեղծվեց նաև զինվորական խորհուրդ, շրջաններում նշանակվեցին հրամանատարներ Սիսիանում՝ Պ. Տեր-Դավթյանը, Տաթևում՝ Խ.Մալինցյանը, Ղափանում Հ Տեր-Պետրոսյանը, Մեղրիում՝ Գ.Շահնազարյանը: Ստեղծվեցին տեղական կառավարման մարմիններ, հասարակական կարգը պահպանելու համար միլիցիա: Սյունիքի հայկական զինված ուժերի թվակազմը այդ ժամանակ հասնում էր մոտ 5000-ի: 1919 թվականի մայիսին ազերիական զինված խմբերը մոտ 6000 հետևակային և 3000 հեծյալ, 12 թնդանոթով միաժամանակ Նախիջևանի, Շուշիի և Կովսականի ուղղություններով հարձակվեցին Սյունիքի վրա: 1919 թ. հոկտեմբերին անհրաժեշտությունից ելնելով, Սյունիքի զինված ուժերի ընդհանուր հրամանատար Արսեն Շահմազյանին փոխարինեց ականավոր զորահրամանատար Գարեգին Նժդեը /Գարեգին Եղիշեի Տեր-Հարությունյան/ որը, ունենալով ռազմագիտական լայն գիտելիքներ, կարողանում էր հմտորեն օգտագործել տեղանքի բնական բոլոր պայմանները և միջոցները՝ լավագույն արդյունքի հասնելու համար:



Միաժամանակ ունենալով ամուր կազմակերպչական ջիղ, նա կարողացավ իր շուրջը համախմբել հայրենիքի պաշտպանության գաղափարներով զինված մարդկանց: Հիմնականում ահա այն ամենը, ինչի մեջ պետք է փնտրել Նժդեհի հաջողությունների բանալին: Նույն թվականի նոյեմբերի 4-ին Զաբուղ ավանի մոտ հայկական զինված ստորաբաժանումները, օգտագործելով հանկարծակի հարձակման մարտավարությունը և միաժամանակ, ճիշտ գնահատելով լեռնային տեղանքի ռազմավարական պայմանները, խաչաձև կրակի տակ գցեցին հակառակորդի հանկարծակիի եկած և կարճ ժամանակում խուճապի մեջ ընկած զինված ստորաբաժանումներին, ոչնչացրեցին հեծյալ գնդերից մեկը՝ շուրջ 1500 հեծյալ, մոտ 600 հետևակային, առգրավեցին 2 թնդանոթ. 20 գնդացիր և բավակա նաչափ զինամթերք:

Քաջ գիտակցելով, որ զորքի մարտունակության գործում մեծ նշանակություն ունեն ամուր կարգապահությունը, գաղափարական, բարոյահուլեբանական ու ֆիզիկական դաստիարակությունը, հրամանատարի կեցվածքը, Գ. Նժդեհը հասարակական և քաղաքական գործիչ Շերամի հետ մշակեց ու ստեղծեց սովյալ շրջանի համար համազորային կանոնադրությունների նմանատիպ հանդիպող «Զորաշարքային կանոնադրությունը»: Այս կանոնադրությունը 20-րդ դարի հայ ռազմարվեստի պատմության օրենսդրական կարևորագույն փաստաթուղթ է և լավագույն վկայությունն այն բանի, որ Սյունիքում գործել է կանոնավոր բանակ՝ իր բոլոր ծառայություններով, իր ռազմավարական խնդիրներով:

Հաշվի առնելով հայկական զինված ուժերի անհամեմատ սահմանափակ լինելը և սպառազինվածությունը, ինչպես նաև տեղանքի նպաստավոր պայմանները, Գարեգին Նժդեհը մշակեց մարտավարական գործողության այնպիսի ձև, որն իրականացնող հիմնական զինված ստորաբաժանումը համարվում էր վաշտը: Համաձայն այդ մարտավարության, վաշտերը բաժանվելով զինված դիվերսիոն խմբերի, հանկարծակի հարձակմամբ (մասնավորապես գիշերային ժամերին) խուճապ էին գցում թշնամու բանակում, որից հետո հայկական հիմնական զինված ստորաբաժանումները հասցնում էին գլխավոր հարվածը: Այս դիվերսիոն խմբերը կոչվում էին «Գայլախմբեր», իսկ վաշտերը, որոնք գլխավորապես գործում էին Դավիթ-Բեկի զինվորական կարգապահության մեթոդներով, կոչվեցին Դավիթբեկյան վաշտեր: «Գայլախմբերը» հիմնականում զինված էին պայթուցիկ ռումբերով, «Մաուզեր» ատրճանակներով և թեթև այլ զինատեսակներով:

Սյունիքում մարտունակ բանակի առկայության և կառավարման համակարգի կայացման մասին է խոսում այն փաստը, որ Պարսից շահը ճանաչում էր Գ. Նժդեհի իշխանությունը և պատրաստ էր նրա հետ պետական մակարդակի հարաբերությունների մեջ մտնել: Գ.Նժդեհի ռազմավարական խնդիրների մեջ էր մտնում նաև Արցախի ազատագրումը: Այդ էր պատճառը, որ 1919 թվականի գարնան վերջին զանգեզուրյան զինված ստորաբաժանումները, նախ միավորվելով Դրաստամատ Կանայանի արշավախմբի հետ, վերացրին թշնամու զինված սեպը Գորիսի Շուռնուխ բնակավայրի մոտակայքում, ապա միասնական ուժերով արշավեցին Արցախ: Արցախում Դրաստամատ Կանայանը կազմավորեց տեղի օրենսդիր և գործադիր մարմինները և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակվեց Զանգեզուր-Արցախի ընդհանուր հրամանատար:

1919 թվականի սեպտեմբերի 20-ին Կաղնուտ, Ուժանիս, Ագարակ բնակավայրերի մոտ Գ. Նժդե- հի ղեկավարած հայկական ստորաբաժանումները հանկարծակի հարձակումներով ջախջախեցին ազերիական եռակի գերազանցող զինված ուժերին, առգրավեցին 2 թնդանոթ. 10 գնդացիր և այլ հարուստ ռազմաավար՝ թշնամուն հետ շպրտելով Մյունիքի տարածքից: 1920 թ. ապրիլին հայկական զինված ուժերը, մոտ 5000 զինվոր, Արցախի տարածքում ջախջախեցին ազերիական մոտ 10000-ոց զինված ուժերին, վերջնականապես նրանց հետ շպրտելով Արցախի տարածքից: Սակայն նույն թվականի ապրիլի 28-ին ազերիական պետության խորհրդայնացումը փոխեց ամբողջ իրավիճակը տարածաշրջանում: Բոլշևիկյան Ռուսաստանի 11-րդ բանակի 28-րդ դիվիզիայի օգնությամբ ազերիական ուժերը առանց որևէ դժվարության գրավեցին Արցախը, այնուհետև վերջնագիր ներկայացնելով գրավեցին Սիսիանը, Կապանը, Գորիսը: Հայկական ուժերը, ամրանալով անառիկ լեռնային մասերում, անցան ինքնապաշտպանության:

Հայերն իրենց հիմնական ուժերը կենտրոնացրել էին Կապանի տարածքում գտնվող Խուստուփ լեռան վրա, որը հանդիսանում էր նաև յուրահատուկ զինվորական կայանատեղի: Այստեղ Նժդեհը ստեղծեց Դավիթբեկյան ուխտերը «Հանուն հայրենիքի՝ դավիթբեկաբար» նշանաբանով: Այս ուխտերի նպատակը ոչ միայն զորքի, այլ նաև բնակչության գաղափարական և բարոյահոգեբանական վիճակի բարելավումն էր: Մոտ երեք ամիս տևող գաղափարական աշխատանքից հետո 1920 թվականի սեպտեմբերի 1-ին Գ. Նժդեհի գլխավո-րությամբ հայկական զինված ուժերը Զևայի ճակատամարտում ջախջախեցին ազերի-բոլշևիկյան զինված ուժերին, գլխովին ոչնչացնելով ռուսական 84-րդ բրիգադը: Արդեն հոկտեմբեր ամսին ազատագրվեց Կապան քաղաքը, որտեղ բնակչությունը ջերմորեն դիմավորեց հայկական զինյալներին: Նույն հոկտեմբերի 14-ին Պ.Տեր-Դավթյանի զինյալ ստորաբաժանումներն առանց լուրջ մարտերի ազատագրեցին Սիսիանը: 1920 թվականի հոկտեմբելրի 24–28-ը ընկած շրջանում հայկական զինված ատորաբաժանումները բնակչության աջակցությամբ ազատագրեցին Գորիս քաղաքը: Փաստորեն ողջ Սյունիքը ազատագրված էր: Այս մարտերի ընթացքում թշնամին կորցրեց մոտ 5000 սպանված, 1600 գերի, 4 թնդանոթ, 67 գնդացիր:

Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո 1921 թվականի ապրիլի 2-ին Տաթևի վանքում Զանգեզուրը հռչակվեց անկախ հանրապետություն «Լեռնահայաստանի Հանրապետություն» անվամբ. վարչապետ նշանակվեց Սիմոն Վրացյանը, ապարապետ՝ Գարեգին Նժդեհը: Լեռնահայաստուանի Հանրապետությունը գոյատևց մինչև 1921 թվականի հուլիսի 7-ը:

Լեռնահայաստանի Հանրապետության գոյությունը և հերոսամարտը հայոց ազատագրական շարժման պատմության անմոռաց էջերից մեկն է, բանի որ Սյունյաց աշխարհի դիրքը իր ռազմավարական նշանակությամբ կենարար դեր է խաղում ներկա և ապագա Հայաստանի, հայ ժողովրդի գոյապահանության գործում: Այս հերոսական պայքարում իրենց ռազմական գիտելիքների իմացության, ազգային գործչի կերպարով և հայրենասիրության մարմնացումով անմահացան այնպիսի ազգանվեր գործիչներ, ինչպիսին էին Դրաստամատ Կանայանը, Գարեգին Նժդեհը, Արսեն Շահմազյանը, Պողոս Տեր-Դավթյանը, նշանավոր հայ մտավորական Ակսել Բակունցը և ուրիշներ:

Խուստուփյան կանչեր. Հրամաններ

«…Հայացքդ մի կտրիր Խուստուփից: Որքան շատ նայես այդ սեգ ու սև ամպերով ծածկված սարին, այնքան շուտ կգա փրկությունդ…

Զարթնած հայրենիքի գրկում՝ լեռներն իբրև բարձ

ճապոնացու արեւոտ սիրով սիրիր հայրենիքդ եւ ամէն օր, որպէս աղօթք, կրկնիր ճապոնական կայսրի խօսքերը. - Եթէ խորապէս գիտակցենք, որ սէրը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը աւելի բարձր է կանգնած Մեծ ու գեղեցիկ Արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամէն մէկիս համար թռչնի փետուրից էլ թեթեւ կը թուայ:

Հ Ր Ա Մ Ա Ն Ն Ե Ր

/ ուշագրաւ է, որ Նժդեհի կոչերն ու հրամանները հեռու են այն պաշտոնական ոճից, չինովնիկական ոճից, ուր ամեն ինչ հրաման է, չոր ու կոպիտ, և ուր բոցավառ խոսքը չկա, բարոյական նպատակաշեշտումը չկա։ <<Հրամայում եմ>>, - գրում էր ցարական հրամանատարը. ինչո՞ւ, այդ մասին ոչինչ որոշ: Մեռի՛ր, առանց գիտնալու, թե ինչու ես մեռնում: Այդ կարևոր <<ինչուին>> է, որ պատասխանում են Նժդեհի հրամանները, և կարևորն ու արժեքավորն այդ է մի ժողովրդի և ժողովրդավարական հերոսի համար: Ժողովուրդը կարող է դավել, մոռանալ, ապերախտել, առաջնորդը՝ բնավ: Նա պետք է կանչի, կամենա, սիրի ու հավատա և վար, ու, կամ հաղթանակի, կամ մեռնի, փախուստի ոչ մի արահետ չպետք է փնտրի: Ահա կրոնական պատգամն ու խորհուրդը Նժդեհի կոչերի /

1919, 23 հոկտ., Լիճք

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերին

Բուլղարական զօրքի մէջ կայ մի գեղեցիկ սովորութիւն, այն է՝ զինուորների անուանացուցակների ստուգման ժամանակ, նախ յիշատակել իրենց երկրի ազատագրութեան ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս է այդ նուիրական անունները՝ «Ընկան», պատասխանում է զօրաշարքի աջ թեւի առաջին զինուորը:

-«Փա՛ռք»,- կրկնում է աջ թեւի երկրորդ զինուորը:

-«Յաւե՛րժ փառք»,- աւելացնում է ամբողջ զօրաշարքը:

Ազգային նահատակների անունների ամէնօրեայ յիշատակումը զինուորներ ի մէջ ստեղծում է բարոյահայրենասիրական բարձր տրամադրութիւն՝ ընկած նահատակներ ի հաւատարմութեամբ ու անձնուիրութեամբ ծառայելու ու քաջօրէն մեռնելու իրենց հայրենիքի համար:

Հրամայում եմ Ղափան-Գենուազ-Գողթանի զօրամասերի պետերին՝ որդեգրել այդ գեղեցիկ սովորութիւնը եւ ամէնօրեայ ստուգումների ժամանակ յարգել մեր ցեղի ընտիր որդիների խնկելի անունները՝ Քեռի, Խէչօ...

Ղափան -Գենուազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1919, 30 նոյեմբեր, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան -Գենուազ-Տաթեւի զօրամասերին Զինուորնե՛ր, թշնամու ցանկութեամբ սկսում է մեր արշաւանքը, մեր խաչակրաց արշաւանքը Գեղուայ Զորի դէմ: Վաղը, երբ Ձեր խենթ գրոհներից եւ զարկերից թշնամին շշմած կը թողնի իր գիւղերը, Ձե զ կո՛ղջունեն մեր հինաւուրց, այսօր թշնամու կողմից պղծուած բերդերի եւ վանքերի աւերակները: Վաղը, երբ այդ ձորում կը լսուի Ձեր ոտների ձայնը, Ձեր զէնքերի շաչիւնը, հայ գերիները, Քէյֆաշէնիբէգերի շնաբարոյ կրքերի առարկան դարձա ծ հայ կանայք ծնկաչոք կո՛աղօթեն Ձեր զէնքի յաջողութեան համար: Վաղը, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, յիշէք Խալիլբէգեան սեւ օրերը, երբ այս գիւղի մօտ թշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ, օսմանեան սրից ճողոպրած, հայ կին ու երեխաներ: Ասում են, այժմ այնտեղ մի ամբողջ ձոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր յաճախ հիւր են գալիս Գեղուայ Զորի շներն ու գիշատիչ-

ները: Յիշէ՛ք այդ եւ եղէք անխնայ՝ Ձե զ դիմադրողների նկատմամբ, ասպետ եւ մարդ եղէք կանանց, երեխաների եւ ծերերի նկատմամբ: Ուրեմն, յառաջ, մեզ հետ Աստուած եւ՝ Դաւիթ-բէգի վրիժակ հոգին: Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝

ՆԺԴԵՀ

1920, 17 յունուար, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերին Ձինուորնե՛ր, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնենք առանց տատանումի: Օրե ր առաջ իմ արեւմտեան ուժերի խենթ հարուածներից ընկաւ անառիկ Գեղուայ Ձորը: Օրե ր անց՝ Ձեր նոյն Գեղուաձորեան թափի եւ կրակի առաջ պիտ ընկնի Որոտանի աջ ափը: 421 Այնտեղ, Գեղուայ բարձունքներում եւ ձորերում մեզ զօրավիգեց Դաւիթբէգի վրիժավառ ստուերը, այստեղ, Որոտանի ճակատում, մեզ կ՛առաջնորդէ Թորոս-իշխանի հայրենանուէր հոգին: Եօթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մէջ, որոնց վրայ է մեր փրկութիւնը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տէրը Ձանգեզուրի: Ուրեմն յառաջ, իմ եօթն անգամ սիրած եւ քա ջ ղափանցիներ, յառա ջ դէպ այդ բարձունքները՝ դէպ Քեափազ, Ային-դաղ, դէպ Հարթիզ: Մեզ հետ Աստուած եւ մեր պատերազմական բաղդը, յառա՜ջ, Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝

ՆԺԴԵՀ

Կոչեր

ԿՈՉԵՐ ՂԱՓԱՆՑԻՆԵՐԻՆ

1.

Ղ Ա Փ Ա Ն Ց Ի Ն Ե՛ Ր

Քո մի մասի վախկոտութեան ու դաւաճանութեան շնորհիւ թշնամին մտաւ Ղափան եւ քո ռազմական ուժերի ամենաքաջանուն ու խիզախ մասը, կրակելով իր վերջին փամփուշտը, քաշուեց լեռները: Եօթն օր է, շա՜տ կարճ ժամանակ, ինչ քեզ արժանի թշնամին իշխում է քո երկրում եւ լուրերը թեւ առած գալիս, հասնում են ինձ, որ դու շատ տեղ արդէն աղ ու հացդ ես պղծում՝ ինքդ գնում ու եկողի փեշը բռնած, գիւղդ ես քաշում: Զգո՛յշ, Ղափա՛ն, մեռցնելով իմ հաւատը դէպ քո հաւատարմութիւնը, դու քեզ ես մեռցնում: «Իջի՛ր, իջի՛ր լեռներից»,- դաւադրաբար կանչում է թշնամին: «Իջի՛ր»,- յիմարաբար կրկնում ես դու: Եւ քո ապստամբ մարտիկներից շատերը թողնում են լեռները: Զգո՛յշ, էլի զգոյշ, թողնել լեռները՝ նշանակում է անարգ մահ գտնել ձոր ու ծմակներում: Հեռո՛ւ, հեռո՛ւ, որոնք հեշտութեամբ քո գերեզմանը կարող են դառնալ: Լսիր եւ մի՛ մոռանար՝ մնալ լեռներում, սարերի վրայ, ղափանցինե՛ր, նշանակում է լինել ապստամբ. չիջնել լեռներից՝ նշանակում է չճանաչել անկոչ եկողների իշխանութիւնը ու սանձահարուած պահել նրանց: Ա՛հ, ո՞ւր էք, ո՞ւր, իմ երեկուայ ուխտուած զինուորնե՛ր, Գեղուաձորեան հպարտ փառակիցնե՛ր: Ո՞ւր էք: Զորերո՞ւմ: Վա՜յ Ձեզ, իմ սիրտն արնոտւում է Ձե զ համար, տեսնելով, թէ ինչպէս թշնամին ձեր անփառունակ գերեզմանն է փորում: Դո՛ւրս, դո՛ւրս արէք ձորերից : Դո՛ւրս ծմակներից, միանալու Դաւիթբէգեան հզօր ուխտին: Դո՛ւրս դէպ ինձ, դէպ լեռները: Ի՞նչ, չլինի թէ որոշել էք մեր Ձե զ հետ միասին ձեռք բերած ամբողջ փառքը թողնելու մենակ մեզ՝ լեռները քաշուած ապստամբներիս: Այո՞, է՛հ թող այդպէս լինի:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ 1920, 12 սեպտ., Խուստուպեան լեռներ

2.

Ղ Ա Փ Ա Ն Ց Ի Ն Ե՛ Ր

Ես՝ Դաւիթբէգեան ուխտին հաւատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրաւոր, ու աւելի հպարտ, քան էի: Ա՛յժմ ես լիզում եմ քո եւ թշնամու ինձ հասցրած վէրքերը եւ սպասում քեզնից խնդրածս վարպետին, որ գայ, շուտ գայ՝ կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումները, քո խայտառակութիւնը, քո բարոյական անկումը: Դու արեցիր այն, ինչ ուզում էր թշնամին:

Նա գոհ է քեզնից, անչափ գոհ, բայց գիտե՞ս, Ղափա՛ն, թէ որքան ուժեղ է նա ատում եւ արհամարհում քեզ: Դու քո վիրաւոր, սրտից զարնուած հրամանատարին ես դաւաճանել, մենակ թողել: Գիտակցո՞ւմ ես, չափում կատարածդ տմարդութեան անչափելի մեծութիւնը: Ա՛ռ, յետ առ ինձնից քո տուած անունները՝ «Երկրորդ Դաւիթ-բէգ», «Աժդահայ-Փաշա», «Ամէն կռուում Փադիշահ» : Այդ անուններով դու կաշառեցիր, խաբեցիր ինձ, որ այսօր ինձ մենակ թողնես: Ինչո՞ւ են ուշանում քո լրտեսները, քո ահաբեկիչները: Ադրբէյջանը յոգնեց իմ գլխին սպասելուց, փոքրիկ գումար չէ երեք միլիոնը: Ստացի՛ր եւ գործի անց:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ 1920, 15 սեպտ., Խուստուպեան լեռներ

3.

Ղ Ա Փ Ա Ն Ի Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Ր Դ Ի Ն

Ժողովո՛ւրդ, քեզ հետ խօսողը քո հրամանատարն է, քո վիրաւոր սրտից զարնուած հրամանատարը, որի սուրը վաղուց է, ինչ յանուն քո ինքնապաշտպանութեան, չի հանգստացել պատեանում: Լսի՛ր, մի աւելորդ, գուցէ եւ վերջին անգամ նա դիմում է քեզ, խօսում քեզ հետ: Նա ասում է. - Քո սեւ ու նեղ օրին, երբ հայակեր Գեղուայ եւ Օխչու ձորերը, երբ Բարգուշատն ու Հաքարուն սպառնում էին քո կին ու երեխաների արիւնով քո երկիրը ներկելու - դու կանչեցիր ինձ եւ ես հասայ քո հաւարին: Ասա՛, 425 ժողովուրդ, այն օրէն քո երկրում մնա՞ց մի բարձունք, մի սար, մի քար, որի վրայ դրած չլինէի իմ յոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ տեսե՞լ ես մի օր, մի ժամ անհոգ, հանգիստ: Դու ինձ տեսե՞լ ես փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու լռում ես. քարերը, քարերը կ՛աղաղակեն, կ՛ասեն՝ ոչ: Ասա՛, մնա՞ց մի բան, որ խնայէի, չզոհաբերէի քո ազատութեան, քո փրկութեան, քո փառքի գործին: Քո դաշտերում, քո հողի վրայ իմ արիւնն է թափել: Դեռ չեն փակուել թշնամու ինձ հասցրա ծ վէրքերը, իսկ քոնը, ժողովո՛ւրդ, քո հասցրած ը միշտ թարմ պիտ մնայ ու հազար վէրքերի ցաւով պիտ մորմոքայ: Ժողովո՛ւրդ, այսօր, երբ ադրբէյջանեան չէկերով կաշառուած «բոլշեւիկ» կոչուած սրիկաները, քո գերեզմանափորերը, կեղծ ու պատիր խոստումներով քո դուռն են բաղխում եւ քո ձեռքով պղծած աղ ու հացիդ սպասում՝ դու դաւաճանաբար լքում ես, մենակ թողնում քո վիրաւոր հրամանատարին: Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահաբեկիչները իմ գլուխն են փնտրում՝ երեք միլիոնով Ադրբէյջանին ծախելու: Ապերա՛խտ ժողովուրդ: Քանի՛-քանի՛ անգամ քո կինն ու երեխան կռիւներից վերադառնալիս փաթաթուել են ձիանս վզով, համբուրել ձեռներս, «փաշա ջա՛ն» կանչել: Քանի՛-քանի՛ անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՞նչ, մոռացա՞ր պրինց Ղաջարին, որի զօրքերին պատերիդ տակից եմ քշել: Վա՛յ քեզ, ժողովուրդ, ի՞նչ պատասխա ն պիտ տաս Աստծուդ, խղճիդ, պատմութեանը:

Ժողովո՛ւրդ, կ՛անցնեն օրեր, թշնամին քեզ զինաթափելուց ու ղեկավարներիցդ զրկելուց յետոյ, երբ այլեւս չի լսուի «Աժդահա փաշա» անունը, կը սկսուի հազար ձեւով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այն ատեն դու կը վերյիշես քո հրամանատարին, որի սուրը եօթն անգամ մեծացրել էր քո երկիրը եւ քեզ համար բացարձակ ապահովութիւն ստեղծել, այն ժամանակ հայեացքդ կը դարձնես Խուստուպին, նրա կատարին նստած սեւ ամպերին, կը նայես, կը կանչես, բայց հրամանատարիդ փոխարէն սարերիդ ու ձորերիդ թոյլ արձագանգը կը պատասխանի քեզ: Գուցէ մի օր էլ, թշնամուց հալածական, սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ յանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրայ իմ սառած դիակը գտնես, ծունկի գաս ու արիւն լացես: Ժողովո՛ւրդ, ինձ լքելուց, ինձ դաւաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Դու չուղարկեցիր վարպետներիդ՝ բութ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թէեւ պատմութիւնը չի՛ ների քեզ, եւ խնդրում՝ երբ ինձ սպանուած գտնես, դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձ ր կատարին, որտեղի ց երեւայ ինձ ե՛ւ Ղափանը, ե՛ւ Գենուազը, ե՛ւ Գեղուաձորը, ե՛ւ Գողթանը: 426 Իսկ մինչ այդ, հայեացքդ մի՛ կտրիր Խուստուպից: Որքան յաճախ, որքան շատ նայես այս սէգ ու սեւ ամպերով ծածկուած սարին, այնքան շուտ կը գայ, կը հասնի փրկութիւնդ: Աստուած եւ իմ սէրը քեզ հետ, ապերա՛խտ ժողովուրդ:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ 1920, 17 սեպտ., Խուստուպեան լեռներ

Ն Ժ Դ Ե Հ Ի' ՄԱՐՏԻ ՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գարեգին Նժդեհի տեսական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն ռազմական արվեստին, զինվորի հոգեբանական և մարտավարական պատրաստությանը վերաբերող աշխատությունները: Նժդեհի աշխատություններում ամփոփված դրույթներն իրենց արդիականությունը չեն կորցրել նաև մեր օրերում և կարող են տեսական ու գործնական նշանակություն ունենալ Հայոց բանակի ռազմագիտական, հայ զինվորի հոգեբանական ու ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման գործում: Ռազմակրթական դաստիարակության տեսանկյունից առաջին հերթին առանձնանում են նրա խոհերը' կապված «ահավարության» հետ, որը Նժդեհի ստեղծած և հայոց լեզվի բառապաշարը հարստացրած բազմաթիվ բառերից մեկն է: «Խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսությունները, որոնք հաղթանակը միշտ էլ նվիրում են այն կողմին, որը մի հատիկ զինվոր, մի թնդանոթ, ամրաշինական մի կառուցվածք ավելի ունի: Ոչ, ոչ, հարյուր զինվորի ուժը միշտ էլ հավասար չէ հարյուրի ուժին: Այդ ուժն ունի իր հավելումն ու նվազումն ունի, նայած թե ո՞վ եւ հոգեբանական ինչպիսի՞ մթնոլորտում ու ինչպե՞ս է ղեկավարում այդ հարյուրյակը: Կռվում գործ ունենք կենդանի, հարափոփոխ, դինամիկ եւ ոչ մեքենական մեռյալ ուժերի հետ, որոնք չեն մնում քարացած միեւնույն կետի վրա: Տեխնիկան վճռական դեր է կատարում միայն այն դեպքում, երբ նրանցից օգտվում ենք իբրեւ ահավարության միջոցներից: Հաղթանակը օրինաչափորեն թեքվում է այն կողմը, որը հաջողվում է ավելի երկար ժամանակ մահվան սարսափի տակ պահել իր հակառակորդին' ճգնելով խորտակել նրա դիմադրական ոգին: Այո°, ըստ էության' ռազմավարությունն այլ բան չէ, եթե ոչ' ահավարություն: Եվ, որովհետեւ մահն է ահացուցիչը' մենք բնավ մեղանչած չենք լինի լեզվի ոգու դեմ, եթե այսպես բանաձեենք ռազմավարությունը-հոգեբանորեն առնված' դա մահավարություն է»: Նժդեհի աշխատությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ նա մեծապես կարեորում էր զինվորականության բարոյահոգեբանական պատրաստվածությունը ե բանակը առաջնորդող ղեկավարության անհատական հատկանիշները: Նույն ժողովուրդը կարող է և հրաշագործություններ կատարել, և խայտառակորեն ծունկի գալ հակառակորդի առաջ, որ հաղթանակի են հասնում դեռ կռիվը չսկսած, նախ' բարոյապես, նախ' հոգիների մեջ. «Վ ա յ այն բանակին, որին հոգեբան ե կարող ղեկավարներ են պակասում: Նման դեպքում տկար տարրերին հաճախ հաջողվում է ապամագնիսացնել, բարոյալքել անգամ մարտունակ տարրերը: Զանգվածների հոգեբանության օրենքներին ծանոթ ղեկավարը անձնական կենդանի օրինակի վարակչությամբ նպաստում է իր զինվորների դրական հոգեբեեռացմանը, որով ե' անկարելի դարձնում բացասականը: Եվ, հենց սրանում էլ, ըստ էության, կայանում է ղեկավարության գործի կեսը նրա կարեորագույն մի մասը»: Ավելացնենք, որ թեև Նժդեհը ճակատամարտում հաղթանակը ապահովելու համար առանձնացնում է երեք նախապայման' զորքի թվաքանակ, զենքի արդիականություն ե բարոյական գերազանցություն, սակայն որպես վճռորոշ նախապայման շեշտում է վերջինը' դրանով հենց բացատրելով Սյունիքում իր վարած հերոսամարտերի հաջողությունը: Հարկ է նշել, որ Նժդեհը միշտ եղել է գիտակցված պայքարի կողմնակից : Ըստ նրա' ժողովրդի ե բանակի տոկունությունը, հաղթանակին հասնելու կամքը մեծապես կախված են այդ պայքարի

նպատակի գիտակցումից, իմա՝ այն գաղափարի, իրավունքի կամ տարածքի պաշտպանության, հանուն որի մղվում է պատերազմը: Ըստ Նժդեհի տեսության՝ ռազմական առաջնորդի կարեորագույն հատկանիշներից է իր զինվորների վրա բարոյական ազդեցություն գործելու ունակությունը, առանց որի անհնար է հաղթանակներ կերտել: Նժդեհը Սյունիքում ձեռք բերված ռազմական հաջողությունների պատճառների թվում առանձնացնում է նաև իր մշակած և կիրառած՝ **«գրոհող ժայռեր», «պայթուցիկ տակառներ», «մուրճ և ոստայն», «ուժանակային հրավառություն», «փրկարար ակնախաբություն», «գայլի ռազմավարություն»** և այլ մարտավարական հնարները, որոնք արդյունավետորեն կիրառում էին նրա դավիթբեկյան ուխտերը և գայլավաշտերը: Թերևս անհնար է մեկ հետազոտության շրջանակներում մանրամասն քննարկել բոլոր վերոնշյալ հնարները, սակայն փորձենք երկու խոսքով անդրադառնալ դրանցից մի քանիսին:

1.Գայլի ռազմավարություն

Ինչպես նշում է Նժդեհը՝ «գայլի ռազմավարության» հիմնական էությունն այն էր, որ առավելապես գիշերային հարձակումների միջոցով Նժդեհի ժողովրդական վաշտերը նախ, հակառակորդին անակնկալի բերելով, ստանում էին բարոյական առավելություն, ապա նոր՝ անցնում հարձակման: Հարձակումների այդ գործելաոճը նրան հնարավորություն էր տալիս խուճապի մատնելու և մարտավարական աքցանի մեջ առնելու հակառակորդին, հաճախ նրան շեղելու գործողության նախապես որոշված ուղղությունից, պարտադրելու մարտը վարել իր համար անհարմար տեղագրական պայմաններում, իսկ յուրային զորքին՝ խուսափելու երկարատև դիրքային մարտերից, նվազագույնի հասցնելու զոհերի թիվն ու ռազմամթերքի ծախսը և այլն:

2.Գրոհող ժայռեր

Տեղին է հիշատակել Նժդեհի կողմից կիրառված մեկ այլ՝ **«գրոհող ժայռեր»**, մարտավարական հնարը: Նժդեհը, կանխատեսելով հակառակորդի գրոհի ուղղությունները, իր և թշնամու միջև գտնվող բարձունքներում՝ ժայռերի տակ, մարտիկներին հրամայում էր թաքցնել մեծ քանակությամբ (դինամիտ): Հակառակորդի գրոհը դեռ չսկսված՝ այդ ականները պայթեցվում էին՝ առաջ բերելով, Նժդեհի բառերով, «քարե կարկուտ» և ծխի ու փոշու ամպերով պատելով ձորերը: Նման հնարը հնարավորություն էր տալիս կանխելու հակառակորդի կազմակերպած գրոհի հնարավորությունը և խուճապ տարածելու նրա շարքերում: Ստանալով հոգեբանական առավելություն՝ Նժդեհի զինակիցները դիմում էին գրոհի և պարտության մատնում անակնկալի եկած թշնամուն:

3. Մուրճ և ոստայն

Անհրաժեշտ ենք համարում հիշատակել նաև **«մուրճ և ոստայն»** կոչվող մարտավարական հնարը, որի հիմնական էությունը հետեյալն էր: Նժդեհն իր ուժերի չնչին մասը տեղաբաշխում էր ռազմաճակատի ոչ էական կետերում, իսկ մեծ մասը թաքցնում էր՝ վճռական պահին որպես կենդանի «մուրճ» կիրառելու համար: Հակառակորդի գրոհն սկսվելուց հետո սյունեցիների հիմնական ուժերը որոշ ժամանակ դեռ մնում էին կրավորական դիրքում, մինչև հակառակորդը, առաջանալով, կարեոր կետերում թուլացնում էր իր զգոնությունը, ինչից հետո Նժդեհը հիմնական ուժերով դիմում էր հարձակման՝ թևանցմամբ կամ թիկունքային գրոհով:

4. Հոգեբանական գրոհներ

Հայոց ռազմարվեստի պատմության տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում նաև Նժդեհի կողմից կիրառվող հոգեբանական գրոհների մարտավարությունը: Ըստ Նժդեհի՝ զորամիավորումները մարտունակ են այնքան ժամանակ, որքան ճակատամարտի ընթացքում զգացվում է դրանց հրամանատարական կազմի ներկայությունը: ՈՒստի հակառակորդի ուժերի ղեկավարումը թուլացնելու նպատակով Նժդեհը իր զինակիցներից առանձնացնում էր մի խումբ մարտիկների, ինչպես ինքն էր կոչում՝ «որսորդներին», որոնց նպատակն էր ճակատամարտն սկսվելուն պես ոչնչացնել հակառակորդի հրամանատարներին: Նժդեհը ռազմարվեստին նվիրված իր աշխատություններում հատուկ շեշտում է մարտում հրամանատարի՝ առաջնորդի խոսքի նշանակությունը: Ըստ նրա՝ այն, ինչ հաճախ դժվարանում է անել արդիական հեռահար թնդանոթը, հեշտությամբ կատարում է ղեկավարի զորավոր խոսքը: Խոսքը, երբեմն՝ հրամայող ու իշխող, երբեմն՝ կանչող ու մղող, միշտ պատկերավոր ու սեղմ, սրտերին՝ կրակ, բազուկներին՝ թափ, կամքերին՝ մղում տվող խոսքն է իշխելու և ղեկավարելու միակ միջոցը: Հաղթելու համար քիչ է խելքը, տաղանդը, անհրաժեշտ է և զորավոր խոսքը: Հաշվի առնելով հայ ժողովրդի պատմական փորձը, ճակատագիրը, Հայաստանի բարդ աշխարհագրական դիրքը և հարևան երկրների մշտական տարածքային նկրտումները՝ Նժդեհն իր բազմաթիվ գիտատեսական, հրապարակախոսական աշխատություններում կարևորել է հայ ժողովրդի համար ռազմարվեստին, ռազմական գիտելիքներին տիրապետելու անհրաժեշտությունը: Նա գրել է, որ պատերազմը մի մշտական չարիք է, որը եղել է, կա ու պիտի լինի, և որ գուցե դարերն ու մարդկային բարոյական մշակույթը կարողանան մեղմացնել նրա բնույթը, փոխել ձևերը, բայց վերացնել՝ երբեք: ՈՒստի կցանկանար, որ մեր ժողովուրդը ևս, որն արևի տակ իր անկախ անկյունն ունենալու ձգտումն ունի, պարտադրորեն յուրացնի կռվի բարդ արվեստը, որը հատկապես մեզ նման փոքր ազգերի համար եղել է և կմնա ինքնապաշտպանության միակ միջոցը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Գարեգին Նժդեհի 1921 թ. Գորիսում տպագրված «Խուստուփյան կանչեր» և 1918 թ. Երևանում Շերամի համահեղինակությամբ լույս ընծայված «Զորաշարքային կանոնադրություն» աշխատությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. «Նժդեհականությունը, որպես ռազմաշունչ, ուժապաշտ, երիցս հայկական տեսականորեն ու գործնականորեն փորձարկված, ամբողջական գաղափարախոսություն, սովորողների գիտակցությանը պետք է հասցվի ոչ թե մասնակիորեն՝ առանձին դրույթներով, այլ լիակատար կերպով՝ իբրե մի կուռ աշխարհայացք, ուսմունք»: Այսպիսով՝ Նժդեհի ուսմունքի հայրենասիրության, ազգին նվիրվածության, քաջության, ինքնազոհության՝ հանուն Հայրենիքի և հայության հավաքական իղձերի իրականացման, հայության բնական կենսատարածքի (արեալ) վերականգնման և հայկական Սփյուռքի հայրենահավաքման մասին դրույթները կարող են համապատասխան նպատակային աշխատանքի, համակարգված կերպով ներկայացման և ճիշտ քարոզչության դեպքում սովորողների համար ունենալ մեծ նշանակություն՝ ապագա զինծառայողների և ռազմական բարձրագույն ուսումնական հաստատությունների ապագ կուրսանտների մասնագիտական գիտելիքների խորացման, ֆիզիկական պատրաստության մակարդակի բարձրացման և, վերջապես, ներկայիս ու ապագա սերունդների ռազմահայրենասիրական ու բարոյահոգեբանական ոգու ամրապնդման տեսանկյունից:

2. Ահա՝ «Դառը և կորուստներով լցված օրեր է ապրում մեր ժողովուրդը: Սակայն համոզված ենք, որ հայոց ազգը վերհառնելու է, ինչպես փյունիկ: Չարաբաստիկ պարտությունն ու նվաստացումը չպետք է թևաթափ անեն մեզ: Թշնամին արթուն է՝ լցված մեզ ոչնչացնելու հանցագործ մոլուցքով: Զգոն լինենք: Պայքարը հանուն ազատության և անկախ ապրելու իրավունքի շարունակվում է: Անհաջողությունները դատավճիռ չեն, դատավճիռ է դրանցից վախենալը: Անհաջողությունները հնարավորություն են ընձեռնում սկսել նորից և պայքարել խելոք ու շրջահայաց: Աստված մեզ երբեք չի տալիս այնպիսի փորձություններ, որոնց ի վիճակի չենք դիմանալու ու դրանք հաղթահարելու: Ուրեմն և՝ թող անցյալի մեր հերոսական խոյանքների օրինակները, ինչպես և Գարեգին Նժդեհի փառահեղ կերպարը ոգեշնչեն բոլորիս, հզորացնեն մեր բազուկը՝ նոր հաղթանակներ կերտելու ճանապարհին: Սյունիքը և Արցախը եղել ու մնալու են Մայր Հայաստանի անբաժանելի մասը: Պայքարը շարունակվում է...

Դասի պլան

Ամսաթիվ		
Դասարան	10-րդ	
Ուսուցիչ (ներ)	Իշխան Ավագյան	
Առարկա	Նախնական զինվորական պատրաստություն	
Թեմա	Լեռնահայաստանի հերոսամարտը, գայլախմբերի մարտավարությունը	
Հիմնական հասկացություն	Հաղորդակցում Ստեղծարարություն	
Ենթահասկացություն	Բովանդակություն Դիրքորոշում և արժևորում Նյութի հետազոտում	
Խաչվող կամ ընդհանրական հասկացություն	Պատճառ և հետևանք Անհատներ և հարաբերություններ Ժամանակ և տարածություն	
Միջառարկայա-կան կապեր	Պատմություն,աշխարհագրություն	
Ձևավորվող կարողունակութ-յուն	Սովորել սովորելու Լեզվական գրագիտություն Իքնաճանաչողական և սոցիալական հարաբերություններ Մշակութային	
Նպատակները	Խորացնել Լեռնահայաստանի հերոսամարտի մասին գիտելիքները, Պատկերացումներ ձևավորել Նժդեհի կողմից մշակված և կիրառված մարտավարական հնարքների մասին, Արժևորել հրամանատարի դերը՝ որպես մարտում հաջողության հասնելու կարևորագույն նախապայման: Ձևավորել Նժդեհյան գաղափարական արժեհամակարգ:	

Վերջնարդյունքներ	Կընկալեն նյութի հիմնական գաղափարը: Կարժևորեն Նժդեհի գաղափարախոսական, քաղաքական, ռազմական գործունեությունը՝ որպես պահի հրամայական տարածաշրջանը հայկական պահելու առումով: Կկարողանան գտնել ընդհանրություններ նժդեհյան մարտավարական հնարքների և ժամանակակից մարտավարության մեջ մոբիլ խմբերով արդյունավետ մարտական խնդիրներ կատարելու հնարքների միջև: Կձևավորվեն սոցիալական հմտություններ՝ համագործակցելու, իրար աջակցելու, միմյանց կարծիք հարգելու:	
Անհրաժեշտ նյութեր	Համակարգիչ, էկրան, պրոյեկտոր, պատկերազարդումներ /Լեռնահայաստան/, քարտեզներ, հերոսամարտի ուրվագիծ, բաշխիչ նյութեր, գրականություն, դասագիրք, տետրեր	
Կիրառվող մեթոդներ	Մտագրոհ,խմբային հետազոտում, ՏՀՏ գործիքների կիրառում, Վեննի դիագրամ, խորանարդում	
Ընթացքը		
Ժամանակ	2 դասաժամ	
5 րոպե	Խթանում. Դասը սկսել մտագրոհի մեթոդով Ի՞նչ գիտեք Գարեգին Նժդեհի մասին: Կարո՞ղ եք բերել Նժդեհի մարտաշունչ կոչերից օրինակներ:	

25 րոպե	Իմաստավորում. Փաստավավերագրական տեսանյութի դիտում Այնուհետև կիրառել <<Խմբային հետազոտություն>> մեթոդը և դասարանը բաժանել չորս խմբի՝ <<Պատմաբաններ>>, <<Տեսաբաններ>>, <<Մարտավարներ>>: Տալ բաշխիչ նյութերը և հանձ-նարարություններ. <<Պատմաբաններ>>խմբին՝ Գարեգին Նժդեհ. կենսագրական ակնարկ Լեռնահայաստանի հերոսամարտի ժամանակագրություն <<Տեսաբաններ>> խմբին՝ Խուստուփյան կանչեր, մարտակոչեր <<Մարտավարներ>> խմբին՝ Նժդեհի մարտի վարման տեսությունը և արդիականությունը	
40 րոպե	Կատարված հետազոտության բանավոր ներկայացում, քննարկումներ	
10 րոպե	Կշռադատում: Կիրառել <<Խորանարդում>> մեթոդը՝ նկարագրելու, համեմատելու, զուգորդելու, վերլուծելու, թեր և դեմ փաստարկներ բերելուհամար	
3 րոպե	Անդրադարձ, Ի՞նչ արեցինք, ինչո՞ւ և ի՞նչ նոր բան իմացար: Ի՞նչը քեզ զարմացրեց:	
2 րոպե	Տնային կամ յուրացման աշխատանք:	

Օգտագործված գրականության ցանկ

1. Մուշեղ Լալայան, Գևորգ Եազըճյան, Ավագ Հարությունյան, Ն 661 Հատընտիր /Գ. Նժդեհ: Երկրորդ հրատարակություն - Երևան հրատարակչություն, 2001թ., 405 էջ:
2. Ն. Հ. Գրիգորյան, Գ 349 Գարեգին Նժդեհ: <<Խուստուփյան կանչեր>> և <<Զորաշարքային կանոնադրություն>> Հայաստան հրատ., 1992, 55 էջ:
3. Վիոլետա Մնացականյան, Նժդեհապատում, Երևան, Լուսակն հրատ., 2012թ., 95 էջ:
4. Վ. Կ. Աթոյան << Նժդեհի՝ մարտի վարման արդիականությունը>> Հայկական բանակ 2. 2010, Լիմուշ հրատ., 133 էջ:
5. Ա. Զաքարյան, Գարեգին Նժդեհ /Փիլիսոփայական Ճեպանկար/: Ե., 2001
6. Վ. Օհանյան, Ս. մարգարյան, Լ. Ղազարյան, Վ. Առաքելյան, Վ. Աստանյան, Ֆ. Երիցյան, Ռ. Ալավերդյան, Հ. Մաթևոսյան, Ա. Վիրաբյան << Նախնական զինվորական պատրաստություն>>, 10-րդ դասարան, <<Աստղիկ Գրատուն>> հրատարակչություն, Երևան - 2017